

ԱՆԱՆԻԱ ՇԻՐԱԿԱՑԻ, Մատենագրություն, թարգմանությունը, առաջա-
բանը և ծանոթագրությունները Ա. Գ. Աբրահամյանի և Գ. Բ. Պետրոսյանի,
Երևան, 1979:

Տարիներ առաջ «Հայաստան» հրատարակ-
չությունը հիմք դրեց «Հայ մատենագիրներ»
մատենաշարին: Արդեն հրատարակված են
Մովսես Խորենացու, Եղիշի, Եղիկ Կողբացու,
Մովսես Կաղանկատվացու, Արիստակես Լաստի-
վերցու և այլոց պատմագրական երկերը: Վեր-
ջին հրատարակություններից մեկը Շիրակացու
«Մատենագրություն» է: Եթե վերահիշյալ եր-
կերից մի քանիսը նախապես ունեցել են աշ-
խարհաբար հրատարակություններ, ապա Շի-
րակացին՝ ոչ:

Թարգմանության առաջաբանում այն միտքն
է հայտնվում, թե Շիրակացու աշխատություն-
ները հունարան դպրոցի հետ սերտորեն առնչվող
բարդ բնագրերից են, զուցե դրանով պետք է
բացատրել, որ չեն թարգմանվել աշխարհա-
բար:

Բանն այն է, որ Շիրակացու գործերից
միայն «Աշխարհացույցն» է, որ դրված է հու-
նաբան հայերենով, մնացած գրվածքները լեզ-
վական առումով VII դարի հայ մատենագրու-
թյունից չեն զանազանվում: Այդպիսի սխալ
եզրահանգումը բխում է այն բանից, որ մենք
վարժ չենք դիտական նեղ բնագավառ արտա-
հայտող հայերենին. մենք վարժված ենք պատ-
մադրական երկերի լեզվին, որոնց բառապա-
շարը անշուշտ զանազանվում է Շիրակացու
դիտական բառապաշարից, սակայն ընդհանուր
հոդի վրա Շիրակացին հայաշունչ հեղինակ է:

Առաջաբանի հեղինակները պնդում են, թե
VII դարի մատենագրությունը միատարր չէ,
«ունեցել է երկու թև, երկու տարբեր ուղղու-
թյուն. դրանցից մեկը սլաշտոնական գոգմա-
տիկայով առաջնորդվող, այդ գոգմաները պրո-
պագանդող սահպանողական ուղղությունն է,
իսկ մյուսը իր ժամանակի առաջադեմ խավերի
հայացքներն արտահայտող, հելլենիստական
առաջադեմ դիտության և գրականության ավան-
դույթին հետևող ազատամիտ ուղղությունը»:
Կարիք կա՞ ասելու, որ առաջաբանի հեղինակ-
ները Շիրակացուն դնում են այս երկրորդ ուղ-
ղության ներկայացուցիչների շարքը: Որտե՞ղ է
այդ առաջին ուղղությունը, իսկ ո՞ւր են երկրորդ
թևի մյուս ներկայացուցիչները: Հենց դրանք
սլիտի դառնալին առաջաբանի հիմնական խնդ-
րերը:

Առաջաբանի հեղինակներից մեկը 1959 թ.
հրատարակել է «Հայաստանը վաղ ֆեոդալիզմի
շրջանում» գիրքը, որից և ահա պատրաստի
նյութը վերցված և տեղագրված է ներկա հրա-

տարակության առաջաբանում: Այդ գրվածքը
սկսվում է այսպես. «Երկրորդ դարում, ինչպես
հայտնի է, Հայաստանում վերջնականապես
հաստատվում են ֆեոդալական սոցիալ-տնտե-
սական հարաբերությունները»: Մինչև VII դար
հասնելը երկու և ավելի մանրատառ էջեր պետք
է կարդանք Հայաստանի բաժանման, թագավո-
րության անկման, նրա կախյալ վիճակի, նա-
խարարների իրավունքների և այլնի մասին, որ
եթե չասենք անկարևոր է, ապա կարող ենք
ասել, որ ամեն մի նման գրքի առաջաբանում
կարելի է կարդալ և ոչ մի կապ չունի Շիրա-
կացու հետ: Առաջաբանի հեղինակները լռում
են և ոչ մի ակնարկ անգամ չեն անում ձե-
ռագրագետ Արտաշես Մաթևոսյանի «Անանիա
Շիրակացու» «Քննիկներ» խիստ արժեքավոր
հոդվածների մասին, որ գիտական նորություն է
և պարզորոշ ցույց է տալիս, որ աշխատությու-
նը պետք է կոչվի «Քննիկներ»: Եթե առաջաբանի
հեղինակները չեն ընդունում Ա. Մաթևոսյանի
բացահայտումները, ապա պետք է դրանք հեր-
քելին իրենց պատճառաբանություններով ու
փաստարկումներով:

Ինչ վերաբերում է այդ բառի բացատրու-
թյանը, ապա մեր կարծիքով ֆենիկոն բառը ոչ
թե առաջացել է ֆանոնիկոն բառի երկու ձայ-
նավորների սղմամբ, այլ հայերեն ֆենի արմա-
տից և հունարեն իկոն մասից: Շիրակացին չէր
կարող և իրավունք չէր համարի ֆանոնիկոն
հունարեն բառի մեջ այդպիսի անհարկի երկու
սղում կատարել. ֆենի արմատն է վերցրել, որ
հայացքի հասկացողությունը և շատ լավ կլի-
ներ, որ իկոնն էլ չլիներ, այլ լիներ ֆենակոն
(ըստ Ա. Մաթևոսյանի տեղեկության ֆենիկոնի
հետ նաև ֆենակոնն է գործածված):

Առաջաբանի հեղինակները պետք է ընդունեն
իրենց ընդդիմախոսի մյուս երկու դիտողու-
թյունները ևս, թեկուզ ի վնաս իրենց, բայց
հօգուտ ճշմարտության ու Շիրակացու գործի
դիտական ուսումնասիրության: Շիրակացին
դժվար թե ինքնակենսագրություն գրած լիներ.
եթե դա ճիշտ այդպես լիներ, հայ հին գրակա-
նության համար մեծագույն բարիք կգա՞նար:
Հետագա բոլոր գրողները կհետևեին Շիրակա-
ցուն և իրենք ևս ինքնակենսագրություն կգրեին
ու այսօր հին հեղինակների ինքնության ու
կյանքի հարցերում այդքան սպիտակ տեղեր
չէինք ունենա: Իրոք այդ հատվածը ամբողջ
ներածության մաս է: Ծիշտ է նաև վաղապետ
ձևի ուղղումը վաղապետ ձևով, չնայած նա-

խաղեպը չկա, որ գիրքը կոչվի ուսուցիչ, սակայն այդտեղ այնքան պարզ է, որ շրջողները սխալի մեջ կրկնակի համառել կնշակնակի. անման ածականը այդ է թելադրում. միտքը այն է, թե ես իբրև մահկանացու վարդապետ (ուսուցիչ) կմեծնեմ, իսկ սա կմնա ձեզ համար իբրև անմահ վարդապետ (ուսուցիչ)։ այլապես անմիտ է նախադասությունը՝ ես սա քողնում եմ ձեզ անման վարդապետներ։

Այս առաջաբանում նաև խոսք չպետք է լիներ «Անանուն ժամանակագրություն»՝ Շիրակացու վերագրելու մասին։ Անհերքելի փաստերով ապացուցված է, որ դա Շիրակացու է։

Դժբախտաբար պետք է ասել, որ Շիրակացու Մատենագրության թարգմանությունը չի բավարարում դիտական պահանջներին։ Այս գործում քիչ դեր չի կատարել բնագրի սխալաշատ և հաճախ չհասկացված հրատարակությունը։ Ահա մի քանի փաստեր։

Ոչ անգաբեցալ—դարձված է ոչ անաբեցալ և այդպես էլ թարգմանված է անկաբգ, մինչդեռ ոչ անգաբեցալ նշանակում է չհամարվեց (Մատենագրությունը, էջ 294, Անանիա Շիրակունույ «Մեացորդք բանից», էջ 18)։ Ինչպես երևում է, բնագրի հիմքը ձեռագիրը չէ. օրինակ՝ № 2679 ձեռագիրն ունի «Նոքա գլամրտացիսն ուսուցին և շամրտացիքն, զոր ուսանն, պահեցին, և հրեայքն, զոր ուսուցին, յայնմ ոչ կացին, և դուք նոցա նմանիք»։ Այս ընդգծված մասը հրատարակության մեջ չկա (էջ 289, ձեռ. էջ 199)։ Իսկ թարգմանության մեջ այդ պակասող մասը փակագծվում է, որպես թե բնագիրը չունի, թարգմանիչը այլ աղբյուրից է օգտվել։

Եւ նորա ասեն. «Բաղում ընդ այն ճանապարհն հորդեալ տեսանէաք գլուխս» (էջ 207)։ Այսպես կառուցված նախադասությունը անկարելի է ճիշտ թարգմանել։ Թարգմանված է. «Բաղում անդամ այս ճանապարհով ընթանալիս շատերին ենք տեսել» (էջ 26)։ Մինչդեռ այստեղ խոսքը վերաբերում է Տրապիզոն քաղաքին։ Ընդ այն նշանակում է երա միջով՝ այսինքն Տրապիզոնի միջով. նախադասությունը պետք է լիներ «Բաղում ընդ այն ճանապարհն հորդեալ տեսանէաք գլուխս»։ Թարգմանության շարունակությունն էլ հայերեն չէ. «Բաղում անգամ այս ճանապարհով ընթանալիս շատերին ենք տեսել՝ տարբեր տեղերից երա մոտ (սովորելու) եկած»։

Մի այլ օրինակ. «Զայս լուեալ, խնդալից սրտի փառաւորեցի զնախախնամաւղն Աս-

տուած, որ առ ձեռնապատրաստ ունի զփափագ ծառայից իւրոց»։ Այստեղ առ-ը նախդիր է և պետք է գոյական խնդիր ունենար. որտե՞ղ է այդ գոյականը։ Բնագիր կաղմողը, որ միաժամանակ թարգմանիչն է աշխարհաբարի, սրա խնդիրը՝ ձեռն, ձուլել է պատրաստ բառի հետ և ստացել ձեռնապատրաստ՝ մի բառ. որ գոյական չէ, և նախադասությունը զրկել իմաստից։

Որպեսզի ընթերցողը հստակ գաղափար կազմի հրատարակված բնագրի մասին, բերում ենք մի նախադասություն և սխալ ու կասկածելի բառերը ընդգծում. «Ուսուցանիչ իմոցս գծադրեալս թէպէտ և կարճատու կարգեցի զսակաս ի բազմաց, զի մի ձանձրոյթ ձեզ զյաճախելն առնիցիմ, սուղ և ճեշտաւիճեցի զնախնաց զիրս» (ձեռագրում պատվագրված՝ «զնախագիրս», էջ 210)։ Այն ձեռագիրը, որի մասին հրատարակիչը գրում է, թե «սխալաշատ մի ընդօրինակություն է» (№ 1770), ճշտում է հրատարակության բոլոր սխալները (տե՛ս էջ 384բ, ավելի ճիշտ՝ 348բ), ինչպես նաև հաջորդ վերնագիրը՝ բացդրուրին-ի զիմաց ունի բացատրություն։

Այժմ անցնենք թարգմանության ընդհանրապես։ Բնագիր. «Եւ յամենայն լսէի զերանութիւն իմաստնոց և որք իմաստութեան են ի խնդիր» (էջ 206)։ Թարգմանված է. «Ամեն բանում լսում էի իմաստունների և իմաստության հետամուտ եղողների երանություն» (խոսքեր) (էջ 25)։ Անիմաստ է։ Այստեղ խոսքը իմաստուններին և իմաստության հետամուտներին երանի տալու մասին է. իմաստունները ու՛մ պետք է երանի տալին։ Այս հաստատվում է անմիջապես հաջորդող նախադասությամբ. «...եւ րանութեան կամեցայ ժամանել»։

Բնագիրը. «Ստացիր զիմաստութիւնն, և յաւելարգել զտգիտութիւնն՝ խաւար կոչելով զծնողն» (ն. տ.)։ Թարգմանված է «Ստացիր իմաստություն և առավել պարսավիր տգիտությունը՝ իբրև խավարի ծնունդ» (ն. տ.)։ Նախադասության վերջին մասի ճիշտ թարգմանությունն է. դարձեալ վերացրու (ոչ թե պարսավիր) տգիտությունը՝ անվանելով խավար ծնող (և ոչ թե՛ իբրև խավարի ծնունդ)։

Բնագիրը. «Եւ դարձեալ երանութեան կամեցայ ժամանել» (ն. տ.)։ Աշխարհաբարն է. «Երանությունը հանգրվանեցի» (ն. տ.)։ Բնագրում մարդը կամենում է հասնել երանության, իսկ թարգմանության մեջ արդեն հանգրվանել է։

Բնագիրը. «Ոչինչ յարմարի առանց թուոց» (ն. տ.)։ Աշխարհաբարն է. «Առանց թվերի ոչինչ չի հիմնավորվում» (ն. տ.)։ Այստեղ խոսքը ոչ թե հիմնավորելու, այլ կարգավորվելու, կարգի ընկնելու մասին է։

1 Ա. Գ. Աբրահամյան, Անանիա Շիրակացու մատենագրությունը, Երևան, 1944։

Բնագիրը. «Եւ պարապեաց յիս. յամենայն խորհրդոց իւրոց» (էջ 207): Աշխարհարարն է. «Եւ պարապեց ինձ հետ իր ողջ իմացութեամբ» (էջ 26): Այս նախադասությունը գրաբարի շատ նուրբ տեղերից է և նշանակում է. «Նա իմ մեջ դատարկեց (այն որ բարբառում ասվում է՝ պարբեց) իր բոլոր գաղտնիքները» և ոչ թե ինձ հետ պարապեց:

Բնագիրը. «Եւ ամենայն ինչը իւր առան յաւարի» (էջ 208): Թարգմանությունն է. «Իսկ իր ունեցած ողջ գույնն ավար են վերցնում» (էջ 27): Առան ասարի նշանակում է կողոպտվեցին, թալանվեցին:

Բնագիրը. «Իսկ նա ոչ անսայր նոցա՝ յերկիր իւր զթալով ըստ գրեցելումն» (էջ 208): Թարգմանությունն է. «Սակայն նա չի լսում նրանց՝ կարեկից հանդիսանալով իր երկրին» (էջ 28): Դրալ ալստեղ ձգտել, փափազել է նշանակում և ոչ թե կարեկից հանդիսանալ:

Բնագիրը. «Արդ դոսկիդ իմ ի սեղանաւորս» (էջ 209): Թարգմանությունն է. «Գցիր քո ոսկին սեղանավորին» (էջ 29): Թարգմանիչը դ հոգը (դոսկիդ) ստացական է կարծել և այնպիսի մի ստացական, որ իմ-ը շեղոքացվել է: Մինչդեռ ոսկիդ իմ նշանակում է «այդ բոլոր տի իմ ոսկին»:

Բնագիրը. «Եւ արդ սկսանիմ ի կրտսերադունէս և ի ժանժաղագունէս ասել զպրակս մանկանցն և զանճմտագունից» (էջ 210): Թարգմանությունն մեջ այսպես է. «Եւ ահա սկսում եմ ևս ամենից ցածրից և պարզագույնից՝ հաշվի առնելով մանուկների և հմտություն չունեցողների [զարգացման] մակարդակը» (էջ 30):

Նախ՝ կրտսերագոյն չի նշանակում ամենից ցածրից, այլ՝ ավելի փոքրից (ածականի բաղդատական աստիճանն է), համապատասխանաբար՝ պարզագույն՝ ավելի պարզից: Բայց գալի կարեորը, Շիրակացին ասում է. «Սկսանիմ ասել զպրակս մանկանցն և (դ) անճմտագունից», այսինքն Շիրակացին մեր այսօրվա թվարանական ռեժիմը պրոմ է. «Սկսում եմ մանուկների և ավելի անճմտունների շարադրել գործողությունները ավելի փոքրից ու պարզից»: Պրակ՝ այն է, ինչ որ մենք թվարանության մեջ գործողություն ենք ասում (չորս գործողություն):

Բնագիրը. «Երկիրդ եւթն պարունակք են» (էջ 325): Այստեղ ասված է, որ երկիրքը կազմված է 7 պարունակներից: Մինչդեռ թարգմանության մեջ երկիրքը առանձին մարմին է, պարունակները գատ մարմիններ են. «Երկրքում գոյություն ունեն 7 ոլորտներ» (էջ 118):

Բնագիրը. «Յաղագս աշխարհագրութեանց լաստուածային գիրս ոչ ուրեք գտանեմք ռեժիմ

ասացեալ, այլ դոյզն ինչ դուն ուրեք եւ այն դժուարահաս և տաժանելի» (էջ 336): Այս բոլորաշակի խոսքի դիմաց աշխարհագրում գտնում ենք. «Աշխարհագրության մասին Աստվածաշնչում չկան լիակատար տեղեկություններ [իսկ եղածները ցրված են այս ու այն տեղ և բարդ են ու դժվար հասկանալի]» (էջ 258): Այս արդեն լրիվ հնարովի է և կապ չունի բնագրի հետ. ինչի՞ համար են անկումավոր փակագծերը, երբ Շիրակացու խոսքը շատ պարզ է և պետք է թարգմանվեր այսպես. «Աստվածաշնչում աշխարհագրության մասին ոչ մի տեղ չենք գտնում հանգամանորեն պատմված, այլ սակավ տեղերում շնչին բան և այն էլ դժվարամատչելի և տաժանելի»:

Բնագիրը. «Զառան սրբոյ զատկիս ուսաք ի Մովսեսէ և յելիցն Իսրայելի յԵգիպտոսէ» (էջ 292): Թարգմանություն. «Զատկի սուրբ տոնը մենք սովորեցինք Մովսեսից (հիմք ունենալով) Իսրայելցիների Եգիպտոսից դուրս գալը» (էջ 160): Փակագծերը ավելորդ են: Այնտեղ պարզորեն ասված է. «Զատկի տոնը մենք սովորեցինք Մովսեսից և Իսրայելցիների Եգիպտոսից դուրս գալուց»:

Բնագիրը. «Զի ըստ նմին աւրինակի ծնեալք ընդ նմա, եւ մկրտեալք ընդ նմին եղիցուք ի սուրբ աւուր ծննդեանն Քրիստոսի» (էջ 284): Թարգմանությունն է. «Նույն օրինակով և նրանով ծնվածներն ու մկրտվածները Քրիստոսի սուրբ ծննդյան օրը թող մաքրվեն» (էջ 149), մինչդեռ աշխարհաբար այս է. «Որպեսզի նույն օրինակով նրա հետ ծնվածներս մկրտված լինենք նրա հետ քրիստոսի ծննդյան սուրբ օրը»:

Բնագիրը. «Իսկ ի կենսաբեր յարութեան զատկին, ի ձեռն մեռուցանելոյ զմեղս մեր ի չորս աւաղանին նմանող լինիմք մեռելութեան մահուն տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի» (էջ 284): Թարգմանված է. «Կենսաբեր զատկի հարություն օրը մեր մեղքերն ավաղանի ջրին հանձնելով, նմանող լինենք մեր տեր մեր Հիսուս Քրիստոսի մահվան անմահությանը» (էջ 149): Անմահության մասին այդտեղ ակնարկ անգամ չկա, խոսքը վերաբերում է մեռելության մահվան: Այդ է ակնարկում նաև հաջորդ տողերում իբրև ապացույց բերված աստվածաշնչական քաղվածքը. «Նմանողը եղիցուք նմանութեան մահու նորա»:

Բնագիրը. «Ոմանք կարծեցին զանունս զայս փրկութեան շարժարանաց լիալ եւ ապա հեղեղեացի արարեալ զձայնն զփուրն ի պէ փոխեցին և ղկենն ի քէ, չլսաքա զար. փրկչին անուանեցին» (էջ 294): Թարգմանությունն է. «Ոմանք կարծում են, թե այս անունը շարժարաններից փրկություն գտնելու համար է ղրված, իսկ հետո հեղեղները փրկվող փոխել են պի-ի, իսկ

կեն-ը քի-ի և Փրկչին «պասքա» անվանել» (էջ 163): Այս նախադասության մեջ երկու սխալ կա, որ նախադասության միտքը փոխել են. նախ՝ հելլենացի չի նշանակում հելլենները, այլ հունարեն, և հելլենները փրկչին պասքա չեն կոչել, այլ ոմանք փրկչի օրն են պասքա կոչել: Ըստ երևույթին զօր-ը, ու է հասկացվել:

Բնագիրը. «Ոչ զամսոյն կոչէ՝ տասն, այլ զլուսինն, քանզի ամսոյն՝ առաջնոյ որ անուանեալն կոչի նիսան ութ և տասն էր» (էջ 294): Մաքուր հայերեն գրված այս նախադասությունը աշխարհաբարում դարձել է. «Այդ օրը «տասն» ասելով նա նկատի չունի լուսնական օրը, քանի որ նկատի ունի ոչ թե ամսվա տասը, այլ՝ լուսնի առաջին ամսվա, որ նրա 18-ն էր (արեգակնային օրվա հիշվում)», իսկ լուսնային՝ տասը» (էջ 164): Այդ նախադասության ճիշտ վերարտադրությունը բոլորովին այլ է. «Ոչ թե ամսի տասն է ասում, այլ լուսնի տասը, որովհետև առաջին ամսի, որ կոչվում է նիսան, 18-ն էր, իսկ լուսնի՝ տասը»:

Բնագիրը. «Վասն խառնուածոյ սեաւ թանձր ամսոյն ի հայելիս պայծառութեան լուսոյն՝ շիկագոյն երևի» (էջ 304): Ի հայելիս ոչ թե նշանակում է նայելիս, որ լեզվական գյուտ կլինի արված, այլ հայելի է նշանակում էջ 315):

Բնագիրը. «Վասն դի թխացեալ աւղն այնպէս ցուցանէ զեղբերսն լուսին» (էջ 304): Աշխարհաբարում դարձել է. «Որովհետև թխած եղանակին լուսնի եղջուրներն այդպես են երևում» (էջ 315): Այստեղ քիսպած Լղանակի մասին խոսք չկա: Բնագրի ճիշտ վերարտադրությունն է. «Որովհետև սեացած օղը այդպես է ցույց տալիս լուսնի եղջուրները»:

Բնագիրը. «Յորժամ եղչեալն հարաւային խոնարհեալ՝ զհարաւ նշանակէ. եթէ արեւմտեայ եղչեալն խոնարհեալ՝ զարեւմտէ հողմ նշանակէ» (էջ 304): Ընդգծված եղչեալն հողմնակին ևզակի պետք է լինի, այդ է թելադրում հաջորդ եղչեալն եզակին, և այն ժամանակ բնագիրը չի տա հետևյալ սխալ թարգմանությունը. «Երբ [լուսնի] եղջուրները թեքված են զեպի հարավ՝ հարավային [հողմի] նշանակ է, իսկ եթե նրանք թեքված են զեպի արեւմուտք՝ արեւմտյան հողմի նշանակ է» (էջ 315): Ըիշտ թարգմանությունն է. «Երբ (լուսնի) հարավային եղջուրը խոնարհված է (որ այդտեղ եղջուրը եղակի է, թելադրում է նաև հաջորդին ածականը), հարավային հողմ է նշանակում, եթե արեւմտյան եղջուրն է խոնարհված, արեւմտյան հողմ է նշանակում»:

Բնագիրը. «Յորժամ երկուցուն կողմանցն հասարակեալ լուսինն միապէս» (էջ 305): Թարգմանված է. «Երբ լուսնի երկու բաժան թևերը

միացված են երևում» (էջ 316): Այնտեղ թևերի և միացման մասին խոսք չկա, այլ ասված է. «Երբ լուսինը հավասարապես է կիսված երկու կողմերի»:

Բնագիրը. «Յորժամ ի լուսինն մլար լինի և յամենայն կողմանց զլուսինն թաղանթեալ իցէ»: Թարգմանությունն է. «Երբ լուսինը մշուշապատ է բոլոր կողմերից և թաղանթապատված»: Ըիշտ վերարտադրությունն է. «Երբ լուսնի վրա մշուշ կա և բոլոր կողմերից պատում է լուսինը»:

Բնագիրը. «Եւ այսպէս ծանուցանէ զաւղոցն ժողով անաւոր և դիւրահալ»: Թարգմանությունն է. «Այդ է ցույց տալիս օդի նոսրությունը և եղանակի պարզեցումը»: Այստեղ եղանակի մասին ոչ մի խոսք չկա, և օդի նոսրությունը այդպիսի բան ցույց չի տալիս: Նախադասությունը պետք է արտահայտել հետևյալ ձևով. «Այսպես է ցույց տալիս օդի նոսր և դուրահալ կուտակումը»:

Բնագիրը. «Ապա թէ լուսինն ի միողէ կողմանէ մլարն պատառի և ձգի»: Թարգմանված է. «Իսկ եթե լուսնի մշուշապատվածությունը մի կողմում մնա»: Ըիշտ թարգմանությունն է. «Իսկ եթե լուսնի մշուշը մի կողմից պատառվի և ձգվի»:

Բնագիրը. «Եւ անտի լինի ձգումն հողմոյն, ուստի ձգումն մլարին եղև»: Թարգմանությունն է. «Հողմը կփչի այն կողմից, որ կողմում մնում է մշուշը»: Ուղիղ թարգմանությունն է. «Այնտեղից կփչի հողմը, որտեղից մշուշը ձգվեց»:

Բնագիրը. «Եւ այդ երրորդ նշան է դժնդակ և առանել պատճառ յուղման ձմեռաւոյն»: Թարգմանված է. «Եվ այդ երրորդ՝ դժնդակ եղանակի նշանը ձմռան զալուտան է գուշակում»: Այս վերջին նախադասությունը արդեն լրիվ հորինված է և բնագրի հետ ոչ մի առնչություն չունի: Ահա այդ նախադասության ստույգ նշանակությունը. «Եվ այդ երրորդը նշան է դաժան ձմեռվա և պատճառ ձմեռային փոթորիկի» (այս վերջին հինգ կետի ճշտումը վերաբերում է բնագրի 305-րդ էջի 4-րդ պարբերությանը, որ թարգմանության 316 էջի վերջին պարբերությունն է):

Բնագիրը. «Եւ դոր ճաւել արժանաւոր եղաք» (էջ 283): Թարգմանված է. «Որը բանախոսելու արժանի եղանք» (էջ 148): Ըիշտն է. «Որը դրել արժան համարեցինք»:

Բնագիրը. «Որ է սկիզբն տաւնից և տարեկանաց մերոց, և զլուիս կացուրդաց, և ամենայնից ի Քրիստոս յիշատակաց» (ն. տ.): Թարգմանությունն է «...որը մեր տարեկան տոների առաջնեկն է և հանդիսավորության ու

բոլոր տեսակի բրիստոնեական հիշատակների գլխավորը» (ն. տ.): Ճիշտն է: Որը մեր տոնրի ու տարվա գլխավոր օրերի սկիզբն է, տոնախմբությունների և Քրիստոսի բոլոր հիշատակությունների գլխավորը:

Բնագիրը. «Խոսկ յետ բազում ամաց նոցա կանոնադրութեանն զտաւ տաւնս այս, որպէս ասեն ոմանք, յաշակերտաց հերձուածոյն Կերինթոսի» (ն. տ.): Թարգմանությունն է. «Այս կանոնադրությունից շատ հետո, ինչպես ասում են ոմանք, Կերինթոսի աղանդավոր աշակերտները, այս երկու տոները բաժանելիս իրարից» (ն. տ.): Բնագրի գտաւ բայը շատ անգամ է թարգմանիչներին դժվարութեան առջև կանգնեցրել: Ասենք, որ գտաւ նշանակում է դտնվեց, ուստի և նախադասության ճիշտ թարգմանությունը կլինի այսպես, «Ներքանց կանոնադրությունից շատ տարիներ հետո այս տոներ դտնվեց (ավելի ճիշտ՝ հնարվեց), ինչպես ոմանք են ասում, Կերինթոսի աղանդի աշակերտների կողմից»:

Բնագիրը. «Բայց կարգաւորութիւն մկրտութեան սրբոյ աւաղանին եւ փոյթ յաւժարութեանն Գ տաւնիցն, յորում առաւել եւս փափագեն միգաղղ (պետք է լինի մեր աղգ—Վ. Դ.) փութացուցանել ի մկրտութիւն ղընծայեալսն Աստուծոյ, և կատարել ղարիւնակ մեծ փրկական խորհրդեանն» (էջ 284): Թարգմանված է. «Բայց սուրբ ավաղանի մկրտության կարգը և երեք տոները փութացան կատարելու ցանկութեամբ, որոնցից Աստուծո ընծայվածներն ամենից մեծ աճապարանքով ցանկանում են կատարել մկրտության տոներ իբրև մեծ փրկական խորհուրդ» (էջ 149): Ամբողջովին աղավաղված այս հատվածի ստույգ թարգմանությունն է. «Բայց սուրբ ավաղանի մկրտության կարգավորությունը և երեք տոների ընդունումը, որին ավելի ևս փափագում է մեր աղղը շտապեցնելու աստուծո ընծայվածների (այսինքն երեսաների) մկրտությունը և կատարելու մեծ փրկական խորհրդի օրինակը»:

Բնագրի մի բառի իսկ սխալ թարգմանությունը կարող է ամբողջովին աղճատել բնագիրը. օրինակ՝ «Յորժամ արեգական պատարումն լինի և առանց ամպոյ մտանէ՝ եթէ լինիցին առ նովաւ շիկագոյն ամպը՝ ոչ ղցայգն և ոչ՝ ղյառաչիկայ աւրն չէ ակնկալութիւն անձրևի» (էջ 306): Այս նախադասության մեջ միայն ցայգ բառի անիմացությունը ամբողջ նախադասությունը անիմաստ է դարձրել: Նախադասության վերջին մասը թարգմանված է այսպես. «Ոչ այդ օրը և ոչ էլ հաջորդ օրն անձրևներ չեն լինելու» (էջ 318): Բայց չէ որ արևը արդեն մտնում է, այլևս այդ օրը չկա,

կա միայն գիշերը, ու արտափայտված է զցայգն ձևով:

Բնագրի «եւ անմարթ էր քահանայապետին թողուլ ղժողովուրդն և երթալ ի տուն իւր, զի բացեալ և ոչ Երուսաղէմ ունէր ղքնակութիւն իւր»: Վերջին մասը թարգմանված է. «Ըստ որում ոչ թե Երուսաղեմում, այլ բացօթեայ էր ապրում»: Խոսքը քահանայապետի մասին է. ինչու պետք է բացօթեա ապրեր. վրանաբնակ էր. բացօթեայ կարող էր հենց տաճարի մոտ լինել: Մինչդեռ բացեալ նշանակում է հեռու, քաղաքից դուրս և ոչ թե բացօթեայ:

Մի այլ օրինակ: Բնագիրը. «Դղրդիւն և սարսափիւն նախ ղքահանայութն պատէր» (էջ 286): Թարգմանված է. «Դղրդիւնը և սարսափը պատել էր նաև քահանաներին» (էջ 152): Դղրդիւնը ինչպե՞ս կարող է քահանաներին պատել. դեռ շխոսենք պատելու մասին: Հայը այժմ կասի բռնել, Թումանյանը ասում է կալով (սարսափ կալով Գոռ Մելիքին): Դղրդիւն այստեղ համանիշ է սարսափ բառին և պետք է թարգմանվեր՝ ահ, երկյուղ, վախ:

Մի այլ օրինակ՝ «Ապա այնուհետև դային առ նա անդուստ յուսումն», Թարգմանված է. «Այնուհետև այնտեղ էին գալիս նրա մոտ սովորելու» (էջ 28): Մինչդեռ կոստանդնուպոլսից Տյուբիկոսին կանչում են, չի գնում, ուստի սովորողները այնտեղից են նրա մոտ գալիս:

«Զի ամենայն (գիրք) կայր առ նմա՝ յայտնիք և գաղտնիք» (էջ 207): Ընդգծված բառը աշխարհաբարում դարձել է դաղտնի (էջ 27), որ այժմ նշանակում է արգելված, մինչդեռ այդտեղ խոսքը անծանոթ զրբերի մասին է: Այս շարքը կարելի է անընդհատ երկարել:

Բայց մի երկու օրինակ էլ բերենք քերականության չիմացության հետևանքներից: Բնագիրը. «Եւ յայնժամ առաքելոցն միայն պարգեւեցաւ հոգին»: Թարգմանված է. «Այն ժամանակ միայն առաքյալներին պարգևեց սուրբ հոգին»: Մի երկու տող վերևում խոսում է սուրբ հոգու առաքյալների վրա՝ իջնելու մասին: Սուրբ հոգին պարկեւելու ի՞նչ ունի, որ պարգևի, ինքն է պարգևավում:

Բնագիրը. «Եւ արդ փոքր ինչ յնտոյ տեսցես ղյիսուս սրբեալ ղՅորդանան իւրով մկրտութեամբն»: Թարգմանված է. «Եվ ահա մի քիչ հետո կտեսնես Հիսուսին սրբված Հորդանանում իր մկրտությամբ»: Մինչդեռ Հիսուսը իր մկրտությամբ մաքրել է Հորդանանը:

Բնագիրը. «Զծննդեանս ղվայելչականս տաւնեցաք, ասէ, և ոչ ղծննդեանն»: Թարգմանված է. «Ծնունդիս տոներ,— ասում է,— վայելչական արտեցիք և ոչ ծննդյանը»: Նախ վայելչական ածականը պետք չէր դարձնել վայել-

շապես մակրայ, երբ հեղինակը զ նախդիրով և ս հոդով մատնանշել է, որ դա պատկանում է իր առջև գտնվող բառին, և հետո ծնունդիս ձևը արդի ընթերցողը կհասկանա իմ ծնունդի և ոչ ուրիշ բան։ Մինչդեռ այնտեղ ս հոդը դրված է մոտիկ օրը ցույց տալու համար։

Օրինակները անվերջ կարելի է շարունակել,

բայց մենք վերցրել ենք միայն թարգմանության մի քանի հատվածները և այն էլ ոչ մանրամասն քննությամբ, որ գրախոսության հնարավորություններից դուրս է։

Հետևությունը պարզ է. «Սիրակացու «Մատենագրություն»-ը նորից պետք է թարգմանվի։

Բանասիր. գիտ. դեկտեմբ. Վ. Դ. ԱՌԱՔԵՆՅԱՆ

ՀԱՅԱԿԻՏԱԿԱՆ ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. *IRÉNÉE DE LYON. Nouveaux fragments arméniens de l'Adversus Haereses et de l'Epideixis. Introduction, traduction latine et notes par Charles Renoux. F. Graffin, Patrologia Orientalis, t. XXXIX, fasc. 1, № 178, Brepols, Turnhout/Belgique, 1978.*

ԻՐԵՆԵՈՍ ԼՈՒԳՎՈՆԱՑԻ, Հայեբեն նոր հատվածներ «Ընդդեմ հերձուհու» և «Ցույց» երկերից. Ներածություն, լատիներեն թարգմանություն և ծանոթագրություններ Շարլ Ռենուի, Տյուրքնհաուս—Բելգիա, 1978:

Հայ թարգմանական գրականության նշանավոր հուշարձաններից է Իրենեոս Լուգվոնացու (մահ. 203 թ.) «Ցույցը առաքելական բարոյությունների» աշխատությունը, որը լույս է տեսել 1907 թ.¹ գիտական աշխարհի կողմից ղեկավարվելով որպես տարվա կարևորագույն գյուտը հայրաբանական գրականության բնագավառում²։ Նման բացառիկ ղեկավարությունը բացատրվում է նրանով, որ Իրենեոսի ինչպես այս, այնպես և մյուս հայտնի աշխատության՝ «Ընդդեմ հերձուհու» երկի հունարեն բնագրերը կորած են։ Վերջինս, որ բաղկացած է հինգ գրքերից, պահպանվել է հնագույն լատիներեն թարգմանությամբ։ «Ընդդեմ հերձուհու» երկի հայերեն թարգմանությունից մեզ են հասել միայն չորրորդ և հինգերորդ գրքերը³, որոնք նույնպես

կարևոր նշանակություն ունեն Իրենեոսի գրական ժառանգության ուսումնասիրման համար։

Իրենեոսի նշված երկասիրությունները, որոնք հետազոտողների կարծիքով հայերեն են թարգմանվել V դարի երկրորդ կեսին հունարան դպրոցի ներկայացուցիչների կողմից, մեծ հեղինակություն են վայելել հայ մատենագրության մեջ և տարբեր ժամաչի հատվածներով հաճախ վկայակոչվել զավանդանական բազմաթիվ հակահայտություններում, ինչպես օրինակ, Կոմիտաս կաթողիկոսի «Կնիք հաւատոյ» (VII դար) և Վարդան Այգեկցու «Արմատ հաւատոյ» (XIII դար) հանրահայտ ժողովածուներում։ Նման մի բաղվածաշար է նաև Ղայաթիայի № 54 հայերեն ձեռագիրը, որն այժմ պահվում է Կ. Պոլսի Հայոց պատրիարքարանում, և որի ընդարձակ նկարագրությունը տվել է Բ. Կյուլենբերյանը⁴։

Այս բաղվածաշարը, սակայն, մի էական հատկանիշով տարբերվում է «Կնիք հաւատոյ» և «Արմատ հաւատոյ» ժողովածուներից։ Եթե վերջիններում բնագրական վկայակոչումները դասավորված են ըստ համապատասխան դավանաբանական ինդիկսների, այս Ղայաթիայի ձեռագրում նյութերն ընդօրինակված են հեղինակների ժամանակագրության համարյա անխախտ

¹ *Տե՛ս* Des heiligen Irenaeus Schrift zum Erweise der apostolischen Verkündigung, in armenischer Version entdeckt, herausgegeben und ins Deutsche übersetzt von K. Ter-Mekerttschian und E. Ter-Minassiantz, Leipzig, 1907. *Նույնը միայն գերմաներեն թարգմանությամբ* լույս է տեսել նաև 1908 թ.։ Իրենեոսի այս գործը թարգմանվել է նաև ռուսերեն, անգլերեն, ֆրանսերեն և մեկ անգամ ևս գերմաներեն (*Ս. Վերբերի կողմից*)։

² *Տե՛ս* Ե. Տեր-Միխայան, Կարապետ եպ. Տեր-Մկրտչյան (մահաբանական), «Բաների Հայաստանի գիտական ինստիտուտի», հատ. Ա—Բ, էջմիածին, 1921—1922, էջ 312—313։

³ Irenaeus, Gegen die Häretiker, Buch IV u. V. in armenischer Version entdeckt von K. Ter-Mekerttschian, heraus-

gegeben von E. Ter-Minassiantz, Leipzig, 1910.

⁴ *Տե՛ս* Բարգեն աթոռակից կաթողիկոս (Կյուլենբերյան), Ցուցակ ձեռագրաց Ղայաթիո Աղղային մատենադարանի հայոց, Անթիլիաս, Լիբանան, 1961, էջ 311—348։